ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 87

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07-ը մարտի 2026թ.

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը (քվորումն ապահովված էր):

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը՝ առաջարկելով ավելացնել լրացուցիչ հարցեր կապված ամբիոնի վարիչների ընտրության կարգի փոփոխության և լրացուցիչ կրթական ծրագրերի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար՝ Մ.Ս. Աթոյան)
2. ԵՊՀ ԻՄ 2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ՝ Ա.Ց. Դավթյան)
3. ԵՊՀ ԻՄ 2026-2027 ուստարվա ընդունելության և ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ու կրեդիտների հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Մ. Օթարյան)
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականությունը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյան)
5. Ընթացիկ հարցեր:
   5.1. ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում փոփոխություններ կատարելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար՝ Մ.Ս. Աթոյան)
   5.2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում իրականացվող լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերի ցանկը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն՝ Մ. Մ.Օթարյան)

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Նա մանրամասն ներկայացրեց նիստերի ժամանակացույցը, նշեց, որ ժամանակացույցը կազմվել է համաձայն ԵՊՀ ԻՄ ռազմավարության և ԵՊՀ Գիտական խորհրդի համապատասխան ժամանակացույցի: Մ. Ս. Աթոյանը նշեց, որ նիստերի ժամանակացույցը նախապես ուղարկվել էր խորհրդի բոլոր անդամներին, փաստաթուղթը շուրջ մեկ ամիս գտնվել է համատեղ քննարկման փուլում: Զեկուցողը տեղեկացրեց, որ ուսումնամեթոդական վարչության և պարոն Մակարյանի կողմից եղել են որոշակի առաջարկություններ: Մ. Աթոյանը հավաստիացրեց, որ ժամանակացույցում ներառված են բոլոր այն պարտադիր հարցերը, որոնք ըստ կարգի պետք է քննարկվեն գիտական խորհրդի նիստերի ընթացքում: Գ. Սիմոնյանի կողմից եղել էր առաջարկ Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) հաշվետվությունը ժամանակացույցում ընդգրկելու վերաբերյալ:

Անդրադառնալով ժամանակացույցում ՈՒԽ-ի հաշվետվության ներառմանը՝ նա պարզաբանեց, որ թեև ուսանողական խորհուրդը կարող է հաշվետվությամբ հանդես գալ իր ցանկությամբ, սակայն, ՈՒԳԸ լինելով համալսարանի անմիջական վերահսկողության տակ, նրանք պարտավոր են ներկայացնել գործունեության հաշվետվություն:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ 87/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 13 անվանական կրթաթոշակ, որից 11-ը ԵՊՀ ԻՄ բյուջեի հաշվին, իսկ 2-ը՝ արտաբյուջետային:

Զեկուցողը նշեց, որ ներկայացվող անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների թեկնածությունները նախապես քննարկվել է Ֆակուլտետների գիտական խորհուրդներում: Ա. Դավթյանը փաստեց, որ թեկնածուների ընտրության հարցում 90%-ով հիմք է ընդունվել նրանց առաջադիմությունը (ՄՈԳ): Նա միաժամանակ նշեց, որ ուսանողների հասարակական ակտիվությունը դեռևս բավականին պասիվ է: Զեկուցողը տեղեկացրեց, որ տնօրենի որոշմամբ՝ այս անգամ բոլոր հավակնորդները ներկայացրել են մոտիվացիոն նամակներ: Ըստ նրա՝ սա հնարավորություն է տալիս տեսնել ուսանողի

անձնական հիմնավորումները, թե ինչու է նա իրեն արժանի համարում տվյալ կրթաթոշակին, և խթանել նրանց ակտիվությունը: Ա. Դավթյանը շեշտեց, որ հաջորդ տարվանից նախատեսվում է հասարակական ակտիվությունը դարձնել պարտադիր և հստակ չափանիշ:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյանը և այլք:

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ թեև ներկայացված ուսանողները գերազանց առաջադիմություն ունեն, սակայն նրանց հասարակական ակտիվությունը բավականին ցածր է: Նա պարզաբանեց, որ ներդրված մոտիվացիոն նամակների նպատակն է ստիպել ուսանողին մտածել, թե ինչու է ինքն արժանի այդ կրթաթոշակին և խրախուսել նրանց դուրս գալ «մեխանիկական» սովորելու գործընթացից: Տնօրենի խոսքով՝ հասարակական ակտիվությունը պետք է դառնա վճռորոշ գործոն նույնիսկ այն դեպքում, երբ ուսանողների գնահատականները հավասար են:

Ա. Հ. Մակարյանն առաջարկեց որպես հասարակական ակտիվության կարևոր ցուցիչ դիտարկել նաև կամավորությունը: Նա նաև հանդես եկավ առաջարկով՝ կրճատել կրթաթոշակների քանակը, սակայն մեծացնել դրանց գումարաչափը, որպեսզի ուսանողների միջև մրցակցությունն ու մոտիվացիան ավելի մեծ լինի:

Ա. Դավթյանը, արձագանքելով քննարկմանը, հաստատեց, որ հաջորդ տարվանից հասարակական ակտիվության չափանիշը լինելու է պարտադիր և ավելի հստակ: Նա համաձայնեց տնօրենի հետ, որ կամավորությունը պետք է դիտարկվի որպես հասարակական ակտիվության անբաժանելի մաս:

Քննարկման ավարտին նիստի նախագահն առաջարկեց հաստատել ներկայացված ցուցակը (Հավելված 2), ինչը խորհրդի կողմից ընդունվեց միաձայն

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ N 87/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 2-ի,
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2026-2027 ուստարվա ընդունելության և ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ու կրեդիտների հաստատելու մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը:

Տնօրենը նշեց, որ մասնաճյուղը որդեգրել է ուսման վարձերը կտրուկ չթանկացնելու քաղաքականություն՝ հաշվի առնելով սոցիալական հանգամանքները: Այնուամենայնիվ, զարգացմանն ընդառաջ գնալու և շուկայական գներին համապատասխանելու համար անհրաժեշտություն է առաջացել կատարել որոշակի չափավոր ավելացումներ: Մ. Օթարյանը նշեց, որ տնօրինության նիստում քննարկված առաջարկի համաձայն՝ նախատեսվում է նոր ընդունվողների համար բակալավրիատի կրթական ծրագրերի վարձավճարն ավելացնել 30,000 դրամով, իսկ մագիստրատուրայի դեպքում՝ 50,000 դրամով: Նա շեշտեց, որ նույնիսկ

այս բարձրացումից հետո ԵՊՀ ԻՄ ուսման վարձերը հանրապետության մակարդակով մնում են ամենամատչելին,։ Նա հավելեց, որ մատուցվող կրթության որակը և միջավայրը լիովին արդարացնում են այս սակագները։

Մ. Օթարյանը հիմնավորեց մագիստրատուրայի վարձավճարի ավելի բարձր աճը նրանով, որ այդ ծրագրերի իրականացումն ավելի մեծ ծախսեր է պահանջում (պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավում, հատուկ մեթոդիկաներ), և նախկինում բակալավրիատի ու մագիստրատուրայի վարձերի միջև տարբերությունը շատ փոքր էր։

Տնօրենը նաև անդրադարձավ այն փաստին, որ ներկայումս դպրոցներում աշխատանքի ընդունվելու և ատեստավորման համար մագիստրոսի աստիճան ունենալը դառնում է վճռորոշ պահանջ, ինչը խթանում է դիմորդների հոսքը։

Զեկույցում նշվեց նաև, որ գործում է ուսման վարձերի զեղչման համակարգ, ինչպես նաև բազմաթիվ ուսանողներ դիմում են տարբեր հիմնադրամների (օրինակ՝ «Իմ քայլը», «Հայ կրթական հիմնարկություն»)՝ ֆինանսավորում ստանալու համար։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Ն. Գրիգորյանը, գրադարանի վարիչ Վ. Պողոսյանը և այլք։

Մասնավորապես Վ. Աղաբաբյանը նշեց, որ թանկացումն ամսական կտրվածքով կազմում է ընդամենը 2000-2500 դրամ: Ն. Գրիգորյանը քննարկման ժամանակ փաստեց, որ մագիստրատուրայի մի շարք առարկաների մեթոդիկայի մատուցման համար հրավիրվում են պրոֆեսորներ, ինչը զգալի ֆինանսական ծախսեր է պահանջում: Նշվեց, որ ներկայումս դպրոցներում աշխատանքի ընդունվելու և ատեստավորման համար մագիստրոսի դիպլոմ ունենալը դարձել է պարտադիր և կարևոր պայման, ինչն էլ խթանում է մագիստրոսական ծրագրերի դիմորդների հոսքը

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ N 87/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2026-2027 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը՝ համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ N 87/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական

համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2026-2027 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների՝ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Օրակարգի չորրորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականությունը հաստատելու մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանի հաղորդումը:

Ա. Մակարյանը շեշտեց, որ այս փաստաթղթի ընդունմամբ մասնաճյուղում ներդրվում է նոր մշակույթ, որտեղ ոլորտների կարգավորումն իրականացվում է ոչ թե պարտադրող կարգերով, այլ որոշակի քաղաքականությամբ և մոտեցումներով: Սա հնարավորություն է տալիս ապահովել ակադեմիական ազատություն և խթանել աշխատակիցների կրեատիվությունը:

Փաստաթղթի նպատակն է ձևավորել շարունակական և փոխշահավետ համագործակցություն շրջանավարտների հետ՝ նպաստելով կրթական ծրագրերի որակի բարելավմանը և շրջանավարտների կարիերայի զարգացմանը: Քաղաքականությունը հիմնված է շարունակականության, ներգրավվածության, թափանցիկության և օրինականության սկզբունքների վրա:

Ա. Մակարյանը մանրամասնեց, որ քաղաքականությունն ուղղված է լինելու շրջանավարտների պարբերական իրազեկմանը, նրանց ներգրավմանը կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման գործընթացներում, ինչպես նաև նրանց համար նպատակային վերապատրաստումների կազմակերպմանը: Որպես կարևոր նախաձեռնություն՝ զեկուցողն առաջարկեց ներդնել «Շրջանավարտների օր» միջոցառումը: Նշեց, որ փաստաթուղթը մշակվել է կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնում, այնուհետև շրջանառվել ստորաբաժանումներում և քննարկվել որակի կառավարման հանձնաժողովում:

Ա. Մակարյանն ընդգծեց, որ թեև ներկայումս կա որոշակի պասիվություն շրջանավարտների հետ կապի հարցում, այս քաղաքականությունը կօգնի ավելի կանոնակարգել և հստակեցնել ստորաբաժանումների աշխատանքն այդ ուղղությամբ:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը, ԵՊՀ ԻՄ գրադարանի վարիչ Վ. Պողոսյանը և այլք:

Մասնավորապես Մ. Օթարյանը ընդգծեց շրջանավարտների հետ կապը պահպանելու կարևորությունը, որպեսզի նրանք համալսարանն ավարտելուց հետո նորից հետ վերադառնան՝ լինի դա որպես աշխատակից, գործընկեր կամ ուղղակի խորհուրդ տան դիմորդներին ընտրել հենց այս բուհը: Քննարկման ընթացքում նա առաջարկեց «Շրջանավարտների օրը» նշել սեպտեմբերի 1-ին, որը Մասնաճյուղի հիմնադրման օրն է:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ N 87/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականությունը համաձայն հավելված 5-ի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Ընթացիկ հարցեր:

5.1. **Օրակարգի** «ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում փոփոխություններ կատարելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի զեկույցը:

Նա ներկայացրեց 8 կետից բաղկացած փոփոխությունները, որոնք համապատասխանեցվել են ԵՊՀ մայր բուհի համապատասխան ընթացակարգին և «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքին.

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից 2019թ. ապրիլի 27-ին հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում» (այսուհետ՝ ընթացակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ընթացակարգի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«1.Սույն ընթացակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) համամասնաճյուղային կամ կառուցվածքային ստորաբաժանման (ֆակուլտետ կամ այլ ստորաբաժանում) կազմում գործող ամբիոնի վարիչի (այսուհետ՝ ամբիոնի վարիչ) թափուր պաշտոնի համալրման կարգն ու պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները։»

2) Ընթացակարգի 2-րդ կետը հանել:

3) Ընթացակարգի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ամբիոնի վարիչն ընտրվում է սույն ընթացակարգով սահմանված կարգով, բաց մրցույթի հիման վրա՝ հինգ տարի ժամկետով:

Նույն անձն իրավունք ունի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում՝ կառուցվածքային փոփոխության դեպքում։

Ամբիոնի վարիչ չի կարող ընտրվել կամ սույն ընթացակարգի 40-րդ կետով սահմանված կարգով ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար չի կարող նշանակվել այն անձը, որի 65 տարին լրացել է:

Ընտրված ամբիոնի վարիչի լիազորությունները դադարեցվում են տնօրենի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին։»

4) Ընթացակարգի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«5.Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է ակադեմիական աշխատանք:»

5) Ընթացակարգի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«8. Ամբիոնի վարիչ կարող է ընտրվել այն անձը, որն ունի.

1) ամբիոնի ուղղվածությանը համապատասխան կամ հարակից մասնագիտությամբ գիտական աստիճան,

2) առնվազն հինգ տարվա ակադեմիական աշխատանքի ստաժ,

3) վերջին հինգ տարիների ընթացքում ունի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված առնվազն երկու գիտական աշխատանք (հոդված) և բացի դրանից՝ ունի նաև սույն ենթակետով սահմանված կարգով հաշվարկված գիտահետազոտական ու ուսումնամեթոդական գործունեության առնվազն վեց միավոր,

Գիտահետազոտական ու ուսումնամեթոդական աշխատանքների տեսակներն ու պայմանները	Միավորը՝ յուրաքանչյուրի հաշվարկով
Դասագիրք Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Մենագրություն Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Ուսումնական ձեռնարկ Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 5.5 տպագրական մամուլ:	3
Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված աշխատանք (հոդված):	2
Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» ընդգրկված պարբերականներում տպագրված գիտական աշխատանք (հոդված):	1

Բացառություն են կազմում.

ա) արվեստի բնագավառի ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդները, որոնք պետք է ունենան առնվազն 7 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, վերջին 5 տարում մասնակցած լինեն առնվազն 3 հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների և ունենան առնվազն մեկ հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:

բ) Արտակարգ իրավիճակների և սպորտի բնագավառի ամբիոնի վարիչի հավակնորդները պետք է ունենան գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 7 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում բուհում իրականացրած լինեն մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և (կամ) ունենան ՀՀ և այլ երկրների պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ են, ունենան հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:»

6) Ընթացակարգի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«9. Ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցները, մրցույթի վերաբերյալ հայտարարության օրվանից՝ մեկամսյա ժամկետում ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարին ներկայացնում են դիմում՝ տնօրենի անունով, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) և գիտական աստիճանի դիպլոմի պատճենները, հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը, որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականը (առկայության դեպքում), մասնագիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր, թեկնածուի ծրագիրը ամբիոնի զարգացման վերաբերյալ:»

7) Ընթացակարգի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«10. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթի նախապատրաստման և կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ԵՊՀ ԻՄ-ում գործում է մշտական մարմին՝ որակավորման մանդատային հանձնաժողով, որի անվանական կազմը հաստատվում է տնօրենի հրամանով:»

8) 40-րդ կետում «9-րդ կետում» արտահայտությունը փոխել «8-րդ կետում» արտահայտությամբ:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ա. Մարգարյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլք:

Մասնավորապես Մ. Օթարյանը հայտնեց, որ դեկանների պաշտոնները նույնպես կարող են դառնալ ակադեմիական, և նրանք պարտադիր պետք է դասավանդեն: Արձագանքելով քննարկմանը՝ նա շեշտեց, որ այս փոփոխությունները բխում են օրենքից, և իրենք չեն կարող շեղվել դրանից: Տնօրենը հավաստիացրեց, որ երկարամյա փորձ և ներդրում ունեցող գործընկերների աշխատանքը միանշանակ կգնահատվի, սակայն ընտրական գործընթացը պետք է ընթանա բացառապես օրենքի տառով:

Լ. Հարությունյանը լսելով նոր պահանջների մասին՝ որոշակի դժգոհություն և ափսոսանք հայտնեց՝ նշելով իրենց 20 տարվա աշխատանքային փորձի մասին:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ N 87/6

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով ԵՊՀ գիտական խորհրդի 2025թ. դեկտեմբերի 18-ի նիստի որոշումը՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

2. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից 2019թ. ապրիլի 27-ին

հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում» (այսուհետ՝ ընթացակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

9) Ընթացակարգի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«1.Սույն ընթացակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) համամասնաճյուղային կամ կառուցվածքային ստորաբաժանման (ֆակուլտետ կամ այլ ստորաբաժանում) կազմում գործող ամբիոնի վարիչի (այսուհետ՝ ամբիոնի վարիչ) թափուր պաշտոնի համալրման կարգն ու պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները։»

10)Ընթացակարգի 2-րդ կետը հանել:

11) Ընթացակարգի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ամբիոնի վարիչն ընտրվում է սույն ընթացակարգով սահմանված կարգով, բաց մրցույթի հիման վրա՝ հինգ տարի ժամկետով:

Նույն անձն իրավունք ունի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում՝ կառուցվածքային փոփոխության դեպքում։

Ամբիոնի վարիչ չի կարող ընտրվել կամ սույն ընթացակարգի 40-րդ կետով սահմանված կարգով ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար չի կարող նշանակվել այն անձը, որի 65 տարին լրացել է:

Ընտրված ամբիոնի վարիչի լիազորությունները դադարեցվում են տնօրենի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին։»

12)Ընթացակարգի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«5. Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է ակադեմիական աշխատանք:»

13)Ընթացակարգի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«8. Ամբիոնի վարիչ կարող է ընտրվել այն անձը, որն ունի.

4) ամբիոնի ուղղվածությանը համապատասխան կամ հարակից մասնագիտությամբ գիտական աստիճան,

5) առնվազն հինգ տարվա ակադեմիական աշխատանքի ստաժ,

6) վերջին հինգ տարիների ընթացքում ունի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված առնվազն երկու գիտական աշխատանք (հոդված) և բացի դրանից՝ ունի նաև սույն ենթակետով սահմանված կարգով հաշվարկված գիտահետազոտական ու ուսումնամեթոդական գործունեության առնվազն վեց միավոր,

Գիտահետազոտական ու ուսումնամեթոդական աշխատանքների տեսակներն ու պայմանները	Միավորը՝ յուրաքանչյուրի հաշվարկով

Դասագիրք Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Մենագրություն Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Ուսումնական ձեռնարկ Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 5.5 տպագրական մամուլ:	3
Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված աշխատանք (հոդված):	2
Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» ընդգրկված պարբերականներում տպագրված գիտական աշխատանք (հոդված):	1

Բացառություն են կազմում.

ա) արվեստի բնագավառի ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդները, որոնք պետք է ունենան առնվազն 7 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, վերջին 5 տարում մասնակցած լինեն առնվազն 3 հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների և ունենան առնվազն մեկ հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:

բ) Արտակարգ իրավիճակների և սպորտի բնագավառի ամբիոնի վարիչի հավակնորդները պետք է ունենան գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 7 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում բուհում իրականացրած լինեն մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և (կամ) ունենան ՀՀ և այլ երկրների պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ են, ունենան հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:»

14) Ընթացակարգի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«9. Ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցները, մրցույթի վերաբերյալ հայտարարության օրվանից՝ մեկամսյա ժամկետում ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարին ներկայացնում են դիմում՝ տնօրենի անունով, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) և գիտական աստիճանի դիպլոմի պատճենները, հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը, որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականը (առկայության դեպքում), մասնագիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր, թեկնածուի ծրագիրը ամբիոնի զարգացման վերաբերյալ:»

15) Ընթացակարգի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«10. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթի նախապատրաստման և կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ԵՊՀ ԻՄ-ում գործում է մշտական մարմին՝ որակավորման մանդատային հանձնաժողով, որի անվանական կազմը հաստատվում է տնօրենի հրամանով:»

16) 40-րդ կետում «9-րդ կետում» արտահայտությունը դարձնել «8-րդ կետում»

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5.2. **Օրակարգի** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում իրականացվող լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերի ցանկը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի զեկույցը:

Մ. Օթարյանը հիմնավորեց հարցի կարևորությունը՝ նշելով, որ Կառավարության որոշմամբ պետական աշխատակիցները պետք է իրենց պարգևավճարների առնվազն 10%-ը ծախսեն մասնագիտական վերապատրաստումների վրա: Տնօրենը շեշտեց, որ իր նպատակն է այդ վերապատրաստումները կազմակերպել հենց Մասնաճյուղում, որպեսզի գումարները չգնան այլ բուհեր: Նա նաև հանձնարարեց ֆակուլտետների դեկաններին ներկայացնել դասընթացների ծրագրեր ըստ նախարարության հաստատված ձևաչափի և նշեց, որ թիրախային խումբը հիմնականում մարզպետարանի աշխատակիցներն են: Լ. Հարությունյանը առաջարկեց ներառել ռուսերենի ուսուցումը՝ նշելով, որ պաշտոնյաներն իրենք են հայտնել սովորելու ցանկություն: Նա նաև հավելեց, որ արդեն իսկ աշխատում է պաշտոնյաներից մեկի հետ: Ա. Ազատյանը նկատեց, որ իրենց ամբիոնի համար այս ձևաչափով թեմաներ գտնելը միանշանակ չէ, քանի որ «Հայոց պատմություն» չեն սովորեցնելու: Տնօրենը հաստատեց, որ ակադեմիական պատմություն սովորեցնելու նպատակ չկա, այլ պետք են գործնական թեմաներ:

Քննարկման ընթացքում առաջարկվեցին հետևյալ ուղղությունները՝ անգլերեն և ռուսերեն լեզուներ, համակարգչային գրագիտությունը, վարքագիծ, գործարար շփումներ և էթիկա, արտ-թերապիա և հոգեբանություն:

Տնօրենը տեղեկացրեց, որ ծրագրերի փաթեթը պետք է պատրաստ լինի մինչև ուրբաթ օրը, որից հետո այն կդրվի առցանց քվեարկության և կներկայացվի նախարարություն՝ լիցենզավորման:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Մ. Ս. ԱԹՈՅԱՆ